

Հաստատված է
ՀԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Վարչության
13.06.2025թ. թիվ 110/01-13.06.25 որոշմամբ
Վարչության նախագահի
Ա. Առաքելյան

Ուժի մեջ է մտնում 16.06.2025թ.
Հրապարակման ամսաթիվը 16.06.2025թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասն տեղեկատվության համար դիմել Բանկ



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Խնայողական հաշվի բացման և սպասարկման

ԵՐԵՎԱՆ 2025

խնայողական հաշիվը (այսուհետ՝ Հաշիվ) բանկային հաշվի տեսակ է, որը հաճախորդի կողմից բացվում է խնայողություններ ձևավորելու նպատակով:

Հաշվի բացման առանձնահատկությունները

- 1. Հաշիվը բացվում է ՀՀ դրամով ֆիզիկական անձ հաճախորդների համար:
- 2. Հաշիվը կարող է բացվել բացառապես AEB Mobile/AEB Online համակարգի միջոցով:
- 3. Հաշիվը բացելու համար հաճախորդը պետք է ունենա Բանկի կողմից ՀՀ արժույթով թողարկված հետևյալ տեսակի քարտերը.
 - VISA GURU կամ VISA GURU TRAVEL տեսակի քարտ (Եթե հաճախորդը չունի այդ քարտերից որևէ մեկը, ապա VISA GURU DIGITAL քարտի թողարկման դեպքում քարտի տարեկան սպասարկման վարձը սահմանվում է անվճար:)
 - այլ տեսակի ֆիզիկական քարտ՝ բացառությամբ ArCa Սոցիալական, ArCa Նվեր քարտերի (Եթե հաճախորդը չունի ֆիզիկական քարտ, ապա MASTERCARD STANDARD կամ VISA CLASSIC քարտի թողարկման դեպքում քարտի տարեկան սպասարկման վարձը սահմանվում է 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ):

Ծառայության տեսակը	Վճարի չափը
Հաշվի բացում	անվճար
Հաշվի սպասարկում, գործառնությունների իրականացում, փակում	Համաձայն «Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների» տեղեկատվական ամփոփագրով բանկային հաշվի համար սահմանված սակագների (տես՝ https://www.aeb.am/hy/sakagner/ հղմամբ)

Հաշվին առկա դրամական միջոցների միջին օրական մնացորդով պայմանավորված փաթեթային պատկանելիությունը և դրանց դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքը

Հաշվետու ամսվա ընթացքում Հաշվում առկա դրամական միջոցների միջին օրական մնացորդ	Փաթեթի տեսակ	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
200 000 – 2 000 000 ՀՀ դրամ	Սթարտ	4.0%	4.07%
2 000 001 – 5 000 000 ՀՀ դրամ	Կոմֆորտ	4.5%	4.59%
5 000 001 – 10 000 000 ՀՀ դրամ	Մաքսիմում	5.0%	5.12%

Փաթեթով պայմանավորված՝ կարող են գործել Բանկի այլ ծառայություններից օգտվելու արտոնություններ, որոնք սահմանվում են համապատասխան ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերով:

Տոկոսների հաշվարկման կարգը

Տոկոսները հաշվարկվում են հաշվետու ամսվա ընթացքում Հաշվում առկա դրամական միջոցների միջին օրական կտրվածքով և վճարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը՝ ավելացվելով Հաշվի մնացորդին:

Հաշվարկում տարին ընդունվում է 365 օր, նահանջ տարվա համար՝ 366 օր: Եթե Հաշիվը բացվել է և/կամ Հաշվին դրամական միջոցները գոյացել են հաշվետու ամսվա ընթացքում, ապա միջին օրական տոկոսների հաշվարկն իրականացվում է հաշվետու ամսվա օրացուցային օրերի հաշվարկով: Եթե հաշվետու ամսվա ընթացքում Հաշիվը փակվել է, ապա այդ ամսվա համար տոկոսներ չեն վճարվում:

Եթե հաշվետու ամսվա ընթացքում Հաշվում առկա դրամական միջոցների միջին օրական մնացորդը գերազանցում է 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամը, ապա տվյալ ամսվա համար տոկոսներ հաշվարկվում և վճարվում են 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամի համար (այդ գումարը գերազանցող մասի դիմաց տոկոսներ չեն հաշվարկվում և չեն վճարվում), իսկ փաթեթի տեսակը Մաքսիմում է:



Հաշվով իրականացվող գործառնություններ

Հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝

- Հաշվին դրամական միջոցների կանխիկ/անկանխիկ մուտքագրում,
- Հաշվի դրական մնացորդի սահմաններում դրամական միջոցների կանխիկացում,
- Հաշվի դրական մնացորդի սահմաններում դրամական միջոցների փոխանցում հաճախորդի՝ Բանկում գործող այլ հաշվի,
- հաճախորդի տարբեր հաշիվների միջև դրամական միջոցների անկանխիկ փոխարկում:

Հաշվին կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ:

Հաշվի մնացորդը կարող է ավելացվել և նվազեցվել առանց գումարային և քանակական սահմանափակման:

Հաշվով գործառնությունների իրականացման համար նվազագույն գումար չի սահմանվում:

Հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով գործառնությունների իրականացման հնարավորություն առկա չէ:

Հաշվի հեռակառավարում հնարավոր է իրականացնել AEB Mobile/AEB Online համակարգերի միջոցով:

Բանկը հաճախորդի Հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը:

Հաշվից դրամական միջոցներ ելքագրելու հաճախորդի կարգադրությունը Բանկը կատարում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը, եթե այլ ժամկետներ նախատեսված չեն օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով և պայմաններով:

Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաշվետիրոջ կարգադրության Հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել հաճախորդին՝ տրամադրելով Հաշվի քաղվածք՝ վերջինիս հաղորդակցման եղանակով:

Բանկի նկատմամբ հաճախորդի դրամական պարտավորությունների կատարման նպատակով Բանկը կարող է անակցեպտ կարգով կատարել հաշվանց, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել հաճախորդին՝ տրամադրելով Հաշվի քաղվածք՝ վերջինիս հաղորդակցման եղանակով:

Հաճախորդը կարող է ներկայացնել իր հարցերը, առաջարկները բողոքները, պահանջները՝ Բանկին գրավոր դիմելով, որին 10 աշխատանքային օրվա ընթացքում Բանկի կողմից տրվում է պատասխան:

Հաճախորդն իր բողոք-պահանջները կարող է ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով:

Հաճախորդի և Բանկի միջև ծագած վեճերը բանակցություններով չլուծվելու դեպքում՝ կարող են լուծվել Արբիտրաժի կամ ՀՀ իրավասու մարմնի (ՀՀ դատարաններ, ՀՀ նոտարներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում) միջոցով:

Հաշիվը կարող է փակվել հաճախորդի փակման միակողմանի դիմումով ցանկացած ժամանակ կամ Բանկի կողմից միակողմանի՝ Հաշվում դրամական միջոցների բացակայության և մեկ տարվա ընթացքում Հաշվով գործառնություններ չկատարվելու, սահմանված սակագները, հաճախորդի այլ պարտավորությունները չկատարվելու, ինչպես նաև «Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով» (տես՝ https://www.aeb.am/uploads/bankayin_carayutyunneri_paymanner.pdf հղմամբ) սահմանված այլ դեպքերում: Հաշվի փակման դեպքում Հաշվի դրամական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կանխիկ կամ նրա ցուցմամբ փոխանցվում է տվյալ հաճախորդի Բանկում գործող այլ հաշվի հաճախորդի համապատասխան դիմումը ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում, որից հետո Հաշիվը փակվում է:

Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, հաշվետիրոջը տրամադրում է վերջինիս նախընտրած լեզվով իր Հաշվի վերաբերյալ քաղվածք, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ Հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել:

Հաշվին առկա միջոցների դիմաց վճարվող տոկոսները ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով և կարգով:

Բանկն իրավունք ունի միակողմանի փոփոխել խնայողական հաշվի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ ծանուցելով հաճախորդներին:

Բանկային ծառայությունները, դրանց մատուցման կարգը, ձևը, ընդհանուր պահանջները, Բանկի վճարների չափերն ու վճարման ժամկետները սահմանվում են Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանագրով և «Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով», ինչպես նաև համապատասխան բանկային ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերով:

Տարեկան տոկոսային եկամտաբերություն

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ Կենտրոնական բանկի «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/02»-ով սահմանված բանաձևը՝

$$APY = (1+r/n)^n - 1$$

որտեղ՝

1) APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

2) r - տարեկան պարզ տոկոսադրույքն է:

3) n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿԱՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՍԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆԵՐՈՒ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՎՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՂՄԱՍԲ՝ <https://www.arlis.am/hy/acts/53049>:

Տոկոսագումարի հաշվարկի օրինակ

Հաշվարկում տարին ընդունվել է 365 օր:

Ստորև բերվող օրինակներում հաշվարկը կատարվել է 31 օրացուցային օր ունեցող ամսվա համար:

Օրինակ 1

- Ամսվա միջին օրական մնացորդ - **1,000,000.00 ՀՀ դրամ**,
- Տարեկան անվանական տոկոսադրույք - 4%
- Վճարվելիք տոկոսագումար մինչև եկամտային հարկով հարկվելը - $1,000,000.00 * 4/100/365 * 31 = 3,397.30$ ՀՀ դրամ
- Վճարվելիք տոկոսագումար եկամտային հարկով (10%) հարկվելուց հետո - $3,397.30 - 3,397.30 * 10/100 = \mathbf{3,057.60 \text{ ՀՀ դրամ}}$

Օրինակ 2

- Ամսվա միջին օրական մնացորդ - **3,500,000.00 ՀՀ դրամ**,
- Տարեկան անվանական տոկոսադրույք - 4.5%
- Վճարվելիք տոկոսագումար մինչև եկամտային հարկով հարկվելը - $3,500,000.00 * 4.5/100/365 * 31 = 13,376.70$ ՀՀ դրամ
- Վճարվելիք տոկոսագումար եկամտային հարկով (10%) հարկվելուց հետո - $13,376.70 - 13,376.70 * 10/100 = \mathbf{12,039.00 \text{ ՀՀ դրամ}}$

Օրինակ 3

- Ամսվա միջին օրական մնացորդ - **7,500,000.00 ՀՀ դրամ**,
- Տարեկան անվանական տոկոսադրույք - 5%
- Վճարվելիք տոկոսագումար մինչև եկամտային հարկով հարկվելը - $7,500,000.00 * 5/100/365 * 31 = 31,849.30$ ՀՀ դրամ
- Վճարվելիք տոկոսագումար եկամտային հարկով (10%) հարկվելուց հետո - $31,849.30 - 31,849.30 * 10/100 = \mathbf{28,664.40 \text{ ՀՀ դրամ}}$

Խնայողական հաշվի դրամական միջոցների երաշխավորման չափեր

Խնայողական հաշվի դրամական միջոցները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.

Ավանդի արժույթային կառուցվածքը	Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	16 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	7 միլիոն ՀՀ դրամ

Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ,	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	16 միլիոն ՀՀ դրամ ¹
	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	7 միլիոն ՀՀ դրամ ²

1. Երաշխավորվում է միայն դրամային ավանդը:
2. Երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Այլ դրույթներ

ԲԱՆԿԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՅԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՋԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՐՈՂ Է «ՃԱՆԱԶԻՐ ԶՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» («KNOW YOUR CUSTOMER») ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՁԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԿՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ (FOREIGN ACCOUNT TAX COMPLIANCE ACT (FATCA)) ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱՆԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ՝ ԱՄՆ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ:

ԵԼՆԵԼՈՎ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻՑ՝ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՀԱՆՁՎԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ:

«ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱԿԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝ www.fininfo.am, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»: